

հետևյալ բեմաների շրջը՝ Դալ-թուրքական սահմանի բացման տնտեսական և սոցիալական հետևանքները, Երկջադաբացիություն, այլընտրանքային տարրերակները, տնտեսական հետևանքները և սոցիալական ասպեկտները, Դայաստան, կայուն զարգացման մարտահրավերներ, և այլն: Մեր գիտաժողովների և դասընթացների մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն կարող եք գտնել մեր վեբ-կայքում՝ www.aiprg.net:

Դանրային քաղաքականության ուսումնասիրման հայկական տեղեկագիր

AIPRG-ին տպագրում է նաև միջազգային գիտական ամսագիր՝ Դանրային քաղաքականության ուսումնասիրման հայկական տեղեկագիրը: Տեղեկագրի նպատակն է ապահովել տնտեսագիտության և հանրային քաղաքականության ցանկացած ոլորտին վերաբերող որակյալ բազմակողմանի աշխատությունների տպագրում և ծանոթացնել ընթերցողին Դայաստանի տնտեսական և զարգացման քաղաքականության հետ: Տպագրվելով անգլերեն (եզվով և լայնորեն տարածվելով նաև Դայաստանից դուրս՝ ամսագիրը հանդիսանում է խմբի Դայաստանին վերաբերող հետազոտությունների տարածման հիմնական միջոցը: Բացի տեղեկագրից խումբը ունի նաև մի շարք աշխատանքային հոդվածներ, որոնցում զետեղված են խմբի անդամների և այլ գիտնականների վերջին ուսումնասիրությունները: Այս հոդվածները տպագրվում և տարածվում են՝ հոդվածների վերաբերյալ ընթերցողների մեկնաբանությունները ստանալու և հետազայում բանավեճ և նոր հետազոտություններ նախաձեռնելու նպատակով:

Ինտերնետային ռեսուրսներ

Խմբի հետազոտությունների տարածման և խմբի գործունեության վերաբերյալ տեղեկություններ ապահովելու նպատակով ստեղծվել է խմբի վեբ-կայքը՝ www.aiprg.net: Իր ստեղծումից ի վեր կայքը տրամադրել է խմբի գործունեության վերաբերյալ նորություններ և հետազոտական նյութեր: Կայքը պարունակում է նաև խմբի ընթացիկ և արդեն ավարտված հետազոտությունների արդյունքները, որոնք տեղ են գտել տեղեկագրերում, աշխատանքային հոդվածներում և խմբի լրագրում: Գոյություն ունի նաև առանձին բաժին, որում զետեղված են նորություններ և հետաքրքիր հոդվածներ, ինչպես նաև խմբի ամենամյա միջազգային գիտաժողովների մասին լիարժեք տեղեկատվություն:



ՎՍԵՆԱՏՈՆ

28179 փոստային դասիչ,
Վաշինգտոն, 20038-9998, ԱՄՆ
Հեռ.՝ +1 (202) 623 8605
 +1 (202) 458 2589
Ֆաքս՝ +1 (202) 478 0934

ԵՐԵՎԱՆ

Նալբանդյան 50, բն.16
Երևան 0010, ՀՀ
Հեռ.՝ (+374 10) 528 723
Ֆաքս՝ (+374 10) 528 723
Էլ-փոստ՝ info@aiprg.net



Ինչ է AIPRG-ին

AIPRG-ին ոչ կուսակցական, ոչ քաղաքական կազմակերպություն է, որը գրավում է Չայաստանի և Ափյուզի համար կարևոր հանրային քաղաքականության խնդիրների ուսումնասիրմանը և վերլուծությանը: AIPRG-ին ծաղում է միավորել Չայաստանի վերաբերող փորձը համայնքներով կայացած հետազոտողների և քաղաքական գործիչների, որոնք մասնագիտանում են տնտեսագիտության, քաղաքագիտության, իրավագիտության, պետական կառավարման և նման այլ ոլորտներում: Խումբը կազմակերպում է ամենամյա գիտաժողովներ և պարբերական դասընթացներ, որպեսզի նպաստի Չայաստանի առջև ծառայած կարևոր խնդիրների ամբողջական ուսումնասիրմանը և քննարկմանը: Նմանատիպ ուսումնասիրությունների և գիտաժողովների միջոցով AIPRG-ին համագործակցում է զարգացման գործակալությունների, միջազգային ֆինանսական ինստիտուտների, որոնք կազմակերպությունների, անհատ հետազոտողների և քաղաքական գործիչների հետ, որպեսզի նպաստի Չայաստանի և Ափյուզի առջև այսօր կանգնած մարտահրավերների առավել լայն ուսումնասիրմանը: Բացի այդ, մենք ծաղում ենք նպաստել երիտասարդ մասնագետների որակավորման քարտեզագծանը՝ հնարավորություն տալով զարգացնել իրենց ունակությունները ոլորտի առաջատար մասնագետների հետ համատեղ ուսումնասիրությունների և համագործակցության միջոցով:

AIPRG-ին շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է Վաշինգտոնում (ԱՄՆ) 2003 թվականի հունվարին: AIPRG-ին ունի նաև ներկայացուցչություն Չայաստանում, որը պաշտոնապես գրանցվել է 2003 թվականի հոկտեմբերին:

Ֆինանսավորում և համագործակցություն

AIPRG-ին իր նպատակների իրականացման համար ծաղում է ունենալ ֆինանսավորման անկախ աղբյուրներ: Ֆինանսավորումն անհրաժեշտ է հետազոտական աշխատանքներ և ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև համակատարան գիտաժողովներ և դասընթացներ կազմակերպելու համար: Կազմակերպության գործունեության համահայկական ուղղվածության պատճառով ցանկացած ներ քաղաքական նպատակների իրագործմանը միտված ֆինանսավորումն արգելվում է: AIPRG-ին ծաղում է նաև ձևավորել փոխհատկետ համագործակցություն պետական մարմինների, ինչպես նաև Չայաստանում և Ափյուզում գործող կազմակերպությունների հետ, որոնք կիսում են մեր տեսակետները՝ անկախ իրենց քաղաքական հայացքներից և ուղղվածությունից: Բացի այդ, կախված ծրագրի ընդլայնումից AIPRG-ին մասնագիտական և ֆինանսական աջակցություն



է ստացել մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններից: AIPRG-ին չնորհակալություն է հայտնում բոլոր դոնորներին և գործընկեր-կազմակերպություններին իր տեսակետները կիսելու համար:

AIPRG-ի կառուցվածք

AIPRG-ին կառավարվում է երկու մարմինների՝ խորհրդատվական հանձնաժողովի և գործադիր խորհրդի կողմից:

AIPRG-ի խորհրդատվական հանձնաժողով

Խորհրդատվական հանձնաժողովը բաղկացած է հեղինակավոր գիտնականներից և հանրային քաղաքականության մասնագետներից, որոնք ապահովելով խմբի մասնագիտական ներուժը, աջակցում են խմբին՝ սահմանելու գործունեության ուղղվածության ուղղությունները և հետազոտությունների թեմաները: Այն նաև աջակցում է խմբին՝ ապահովելով ֆինանսական կայունությունը և ճանաչվածությունը, ինչպես նաև կապը համապատասխան գիտնականների և քաղաքական կառույցների հետ:

AIPRG-ի գործադիր խորհուրդ

Գիտնականներից և հանրային քաղաքականության մասնագետներից բաղկացած գործադիր խորհուրդը, որը պատասխանատու է ամենօրյա աշխատանքի համար, համակարգում է խմբի գործունեությունը փորձագիտության ոլորտում:

AIPRG-ի անդամները

Խմբի անդամները հանրային քաղաքականության ոլորտում մեծ համբավ վայելող մասնագետներ են՝ գիտական քարտե ներուժով, որը կիրառվում է ի նպաստ Չայաստանի և Ափյուզի բարգավաճման: Խմբի անդամների ցանցը միավորում է հիմնականում դոկտորի գիտական աստիճան ունեցող մոտ 40 հետազոտողների և հանրային քաղաքականության մասնագետների, որոնք մասնագիտանում են տնտեսագիտության, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, իրավագիտության և պետական կառավարման ոլորտներում և քննվում են աշխարհի տարբեր երկրներում: Խումբը բաց է հանրային քաղաքականության և այլ ոլորտների

փորձագետների անդամակցության համար: Խմբի անդամների ցանկին և անդամների համառոտ կենսագրություններին ծանոթանալու համար այցելեք խմբի վեբ-կայքը՝ www.aiprg.net

AIPRG-ին Չայաստանում

Չայաստանում հանրային քաղաքականության ուսումնասիրման արևմտյան ոճի կենտրոն հիմնելու նպատակով խումբը բացել է իր երևանյան մասնաճյուղը: Խմբի Չայաստանյան մասնաճյուղի հիմնական նպատակն է օգնել օգտագործել խմբի անդամների համաշխարհային ցանցի ռեսուրսները և ներուժը ապահովելով հետազոտական և վարչական աջակցություն: Չայաստանյան մասնաճյուղը Չայաստանում նախաձեռնում է իրականացնում է հետազոտություններ, կաղնակերպում է գիտաժողովներ, դասընթացներ և կլոր սեղան-քննարկումներ, որոնք միտված են Չայաստանի վերաբերող կարևոր խնդիրների շուրջ քննարկումներ և քանակներ նախաձեռնելուն: Բացի այդ երևանի մասնաճյուղը կապող օղակ է հանդիսանում խմբի և այլ պետական մարմինների, միջազգային դոնորների, ինչպես նաև տեղական այլ շահատուների և ԳՎ-ների հետ:

AIPRG-ի գործունեությունը

Իր հիմնադրումից ի վեր խումբը կազմակերպել է մի շարք ամենամյա գիտաժողովներ հետևյալ թեմաներով՝ 2003 թվականի հունվար - Չայաստան, վերջին տնտեսական զարգացումները և աճի հեռանկարները, 2004 թվականի հունվար - Չայաստան, կայուն զարգացման մարտահրավերներ, 2005 թվականի հունվար - Չայաստան, շահույթի բաշխումը և սոցիալական ապահովության համակարգը, 2006 թվականի հունվար - Չայաստան, պետական սեկտորի կառավարումը և տնտեսական աղյուսակետությունը:

AIPRG-ի ամենամյա գիտաժողովները զրախիչ են տարբեր գիտական կենտրոնների և հանրային քաղաքականությանը գրավող կազմակերպությունների՝ ներառյալ Գամաշխարհային բանկի, Արտարժույթի միջազգային հիմնադրամի, հետազոտական կենտրոնների, տարբեր միջազգային և հայկական պետական մարմինների ներկայացուցիչների համար, ինչպես նաև տարբեր գիտական, մասնավոր կազմակերպությունների և անհատների համար: Խումբը հնարավորություն ստեղծեց Չայաստանյան մասնաճյուղի համար մասնակցելու երրորդ տարեկան գիտաժողովին ուղիղ տեսակապի միջոցով: Այս գիտաժողովի մասին առավել լիարժեք տեղեկատվություն ստանալու համար (այդ թվում օրակարգը, զեկույցները և ուսանկարները) կարող եք այցելել խմբի վեբ-կայք՝ www.aiprg.net:

Խմբի գիտաժողովները հաճախ անց են կացվում Գամաշխարհային բանկի Վաշինգտոնի գրասենյակում: Խումբը գիտաժողովները կազմակերպելու նպատակով տրամադրված ֆինանսական օժանդակության համար չնորհակալություն է հայտնում Գամաշխարհային բանկին:

AIPRG-ի գիտաժողովները և դասընթացները

Ի հավելումն ամենամյա գիտաժողովներին խումբը ողջ տարվա ընթացքում կազմակերպում է նաև ավելի փոքր դասընթացներ և թեմատիկ գիտաժողովներ: Դետազոտություններ են իրականացվել

